

Երբ ձեր գործերը բարեյաջող են, երբ ձեր ձեռնարկները կ'արդիւնաւորուին, երբ հանրային համակրութիւնը կ'աւելնայ ձեր շուրջը, գիտցէք որ ստուերներու ետին, և նոյն իսկ ձեզի շատ մօտ, կան այնպիսի անձեր որ հաշտ աչքով չեն դիտեր զձեզ, և զաղանաբար կը հեծեն ու կը հիւժին: Թե-
րևս կ'որենան ձիգ մը թափել երեսոյթները փրկելու համար, և արտաքնապէս համա-
կրութիւն ցոյց տան, և թերևս շնորհաւո-
րեն ձեր յաջողութիւնները, և ձեզի նոյն իսկ ըսեն թէ հպարտ կը զգան ձեզմով, և թերևս սքանչաւան և հիացում յայտնեն տեսնելով ձեր բարձր և պատուաբեր դիր-
քը, այսու ամենայնիւ անոնց սիրտը կը հիւծի...

Նոյն իսկ դուք, ո՛վ ունկնդիրներս, չէ՞ք զգացած յանկարծ տրտմութեան պէս բան մը, մեղամաղձոտութիւն մը, երբ զըտ-
նուած էք այնպիսի բացառիկ առանձնա-
շնորհեալ անձի մը ներկայութեան՝ որուն մօտ կը տեսնէք ամէն առաւելութիւններ, որոնք կը պակսին ձեզմէ: Զեր բարեկամ-
ներէն մին իր արտակարգ և անսպասելի յաջողութիւնը պատմած ատեն միթէ ձեր համակրական ժպիտին ետեւ չէ՞ք զգար նախանձի հպանցումը:

Մենք ստուգիւ չենք սիրեր մտիկ ը-
նել զժրախտ մարդոց թշուառութեան պատմութիւնը, բայց աւելի ևս անտանե-
լի ըլլալու աստիճան նեղութիւն կը զգանք երբ երջանիկ մարդ մը կը պատմէ իր ու-
րախութիւնները:

Ներել միշտ զժուար է. բայց մեզի հասցեւած նախատինքները ներելէն աւելի զժուար է այլոց վայելած երջանկութեան հանդուրժելը: Ստուգիւ Առաքեալին պատ-
ուէրը կատարելը գիւրին բան չէ, և եթէ կը ճանչնանք մէկը որ գիտցած է գործա-
դրել զայն, վստահ եղէք որ այդպիսին ճշմարիտ քրիստոնեայ մըն է: Ուրախա-
ցողներուն հետ ուրախ ըլլալու համար պէտք է որ Աստուծոյ հոգին տարած ըլլայ մեր տեղիւմ առ սրտին վրայ մեծ յաղթա-
նակ մը, և այդ յաղթանակը կատարեալ և վճռական ըլլալու համար յաճախ բա-
ւական մը տարիներ պէտք են քրիստոնէ-
ական կեանքի: Խնդրենք Աստուծմէ որ-
պէսզի այդ գերազոյն յաղթանակը տանի մեր մէջ, վասնզի ստորին և անպատուորեր բան է տեսնել զայլս երջանիկ և չուրա-
խակցել անոնց:

ՂԵԻՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Մ Ե Ր Ա Գ Ո Յ Ն Փ Ա Ս Տ Ը

Կար ասեմ մը երբ մանուկ էի ես,
Եւ ծնողս էին ինծի համար ամէն բան.
Կը հաւասայի Արաչի մը գոյութեան,
Քանզի ծնողս այնպէս կը հաւասային:
Կ'աղօթէի, կը կարգայի, եւ կ'երգէի ջերմեանդ,
Որովնեսեւ մայրիկս բարի
Եւ հայրիկս բարեպաշտ
Եղան ինծի, հաւասքիս
Պաշտամունքիս հեղինակ:
Զկան անոնք, աւա՛ղ, այսօր.
Իմ բարի ծնողս հաւասաւոր,
Եւ ես մեծցայ. — Մսածումը
Մսաւ իմ մէջ — Ես ինքս ինծի
Ըլլալ հեղինակը Աստուծոյ:

Գտնել հետքերն ու փաստեր
 Անոր լինելութեան,
 Ծնողիս Աստուծոյ կ'ուզէի որ
 Իմ ալ գտածս ըլլար:
 Կասկածը այսպէս սահեցաւ
 Մտիս խոր:
 Հաւաստի մէկի մը պէս խոյս տուաւ.
 Մէկիկ մէկիկ արտաբանեցի մտքս
 Ու արհիս խորանէն
 Աղօթներն ու սաղմոսները,
 Ու բոլոր ապացոյցներն
 Ու փաստերը Ս. Գրքին,
 Ու փնտնեցի ապացոյցը,
 Բնութեան ծոցը
 — Հողին, ջուրին, ծաղիկին
 Աստուծոն եւ Արեւին
 Ու ալեւրոն մէջ ծովուն:
 Բայց միտքս չգտաւ երբեք
 Իր խաղաղութիւնը:
 Իզուր երկրի ու երկինքի
 Անսահմանութիւններն
 Թափառեցայ, ու ոչ մէկ հետք
 Երեւցաւ աչքերուս:
 Եւ յուսահատ դարձայ տուն,
 Հոգիս վրդով ու յոգնաբեկ:
 Եւ դարձուցի աչքերս իմ մէջ.
 Բայց իզո՞ւր... «կայ, չկայ»
 Իրար հերքող լուռ ձայներ
 Զիս լեցին բողբոլ հոգիս
 Կասկածանքով յուսաբեկ:

* * *

Բայց ուրացումն ալ չտուաւ
 Ինձի երբեք զոհացում:
 Փաստ չկայ. բայց Աստուծոյ մը
 Պէտքը կը զգամ հոգւոյս մէջ:
 Պէտքին զգացումը — *փնտնանք*
 Հաւաստի մ'է ինձ հզօր
 Թէ *կորուստ մը ունիմ*:
 Որուն անունն է, ես կը զգամ,
 Աստուծ:

10 Հոկտ. 1930
 Գահիրէ

Ա.ԿԻՒԼԻՆԷ